ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՌԱԶՄԱԳԵՐՈՒ ՀԵՏ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊԻ ՄԱՍԻՆ

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Խմբագրակազմ՝ Կարեն Թումանյան
Նաիրա Բուլղադարյան
Արմինե Սադիկյան
Էդգար Խաչատրյան

Նկարները՝ Արտակ Օհանյան

ՀՔԱ Վանաձորի գրասենյակ
ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 59

հեռ. +374 322 4 22 68

Էլ. հասցե՝ hcav@hcav.am;
asakunts@hcav.am
http://www.hcav.am

Վանաձոր 2006

Թուլություն է
չարությունը՝

Գարեգին Նժդեհ

Ներածություն

«Ռազմագերիների հետ վարվելակերպի մասին» Ժնևյան կոնվենցիաները ընդունվել են 1949թ օգոստոսի 12-ին: Ժնևյան կոնվենցիաները և լրացուցիչ արձանագրությունները համարվում են միջազգային մարդասիրական իրավունքի կարևորագույն աղբյուրները: Մարդասիրական իրավունքի նպատակն է «հումանիզացնել» (դարձնել մարդասիրական) զինված ընդհարումները, այսինքն՝ կարգավորել ռազմական գործողությունները, նվազեցնել ռազմական գործողությունների բերած զրկանքները և ծանր հետևանքները:

Հայաստանի Հանրապետությունը Ժնևյան կոնվենցիաներին և լրացուցիչ արձանագրություններին միացել է 1993թ մարտի 31-ին Խորհրդարանի՝ Գերագույն Խորհրդի որոշումներով: Դա նշանակում է, որ մեր պետությունը պարտավոր է ձեռնարկել միջոցներ՝ պահպանելու Ժնևյան կոնվենցիաներով ստանձնած պարտավորությունները: ՀՀ զինված ուժերում ծառայող յուրաքանչյուր զինվորի կողմից մարդասիրական իրավունքի չպահպանման կամ խախտման հետևանքով միջազգային հանրության առջև Հայաստանը կպատվազրկվի: Իսկ դա իր հերթին նշանակում է, որ խոշոր պետությունների ու միջազգային կազմակերպությունների կողմից մեր պետությունը կենթարկվի քաղաքական և տնտեսական ճնշումների:

Ով է համարվում ռազմագերի

Զինված ընդհարումների կամ ռազմական գործողությունների ժամանակ, երբ զինվորը հայտնվում է հակառակորդի դաշտում, ընկնում նրա տիրապետության ու իշխանության տակ, համարվում է ռազմագերի: Համաձայն Ժնևյան կոնվենցիաների, ռազմագերի կարող է համարվել

- պաշտոնապես զորակոչված կամ պայմանագրային հիմունքներով զինված ուժերում ծառայող զինվորը կամ սպան,

- ոչ պաշտոնապես, զինված ընդհարումներին մասնակցող կամավորը կամ ջոկատների ծառայողը (պարտիզան կամ աշխարհազորային)

Ռազմագերի կարող է դառնալ նաև այն զինվորը, որը

- ունի իր ենթակաների համար պատասխանատու ղեկավար անձ,
- ունի որոշակի և հեռվից պարզորոշ երևացող տարբերանշան՝ զինվորական կամ այլ մարտական հագուստ,
- զենքը կրում է բացահայտ՝ բոլորի համար տեսանելի,
- իր գործողություններում պահպանում է պատերազմի օրենքներն ու սովորույթները:

Ռազմագերուն չի թույլատրվում սպանել

Եթե հակառակորդը գերեվարում է մյուս կողմի զինվորին, դա ամենևին չի նշանակում, որ թույլատրելի է նրան սպանելը, մարմնական վնասվածք հասցնելը: Ժնևյան կոնվենցիաների 2-րդ մասն ամբողջությամբ նվիրված է ռազմագերիների նկատմամբ ցուցաբերվող մարդասիրական վերաբերմունքին:

Եթե զինվորը

- զենքը վայր է դրել
- հիվանդացել է
- վիրավորվել է
- ծերբակալվել է
- կամ ցանկացած այլ պատճառով չի մաս նակցում ռազմական գործողությունների, ապա իրավունք ունի օգտվելու մարդասի րական վերաբերմունքից՝ առանց ռասայի, մաշկի գույնի, կրոնի կամ հավատի, սեռի, ծագման կամ գույքային դրության կամ որևէ այլ աննպաստ տարբերակման:

Արգելվում է ռազմագերու նկատմամբ դաժանություն ցուցաբերել

Ռազմագերու հետ պետք է մշտապես վարվել մարդասիրաբար

Չի կարելի ռազմագերուն խոշտանգել, ենթարկել տանջանքների, վիրավորել կամ էլ այնպիսի գործողություններ թույլ տալ, որը կնվաստացնի անձի արժանապատվությունը:

Չի թույլատրվում ռազմագերուն ենթարկել

- ֆիզիկական խեղման
- գիտական ու բժշկական փորձարարության, ինչ բնույթի էլ այն լինի, եթե այն նպատակ չունի բուժել ռազմագերուն կամ էլ չի բխում նրա շահերից
- ռազմագերին պետք է մշտապես լինի պաշտպանված, հատկապես բռնության

կամ ահաբեկման ամեն տեսակի ակտե
րից, վիրավորանքից և ամբոխի հետաքրք
րասիրություններից:

Ցանկացած հանգամանքներում ռազմագերին ունի
իր անձի և պատվի նկատմամբ հարգանքի իրա-
վունք:

Կին ռազմագերիների նկատմամբ հարկ է վերաբեր-
վել նրանց սեռին վայել հարգանքով: Նրանց հետ
բոլոր դեպքերում պետք է վարվել ոչ ավելի վատ,
քան՝ տղամարդկանց հետ:

Ժնևյան կոնվենցիաներով միջազգային հանցագոր-
ծություն է դիտվում հակառակորդի կողմից գերու-
թյան մեջ պահվող ռազմագերու նկատմամբ ցան-
կացած անօրինական գործողություն կամ անգոր-
ծություն, ինչի հետևանքով նա կարող է մահանալ
կամ էլ նրա առողջությանը դիտավորությամբ վնաս
պատճառվի:

Ռազմագերու հարցաքննությունը

Յուրաքանչյուր ռազմագերու հարցաքննություն հակառակորդ կողմը պետք է վարի ռազմագերուն հասկանալի լեզվով: Ռազմագերին պարտավոր է հայտնել միայն իր անունը, ազգանունը, կոչումը, ծննդյան տարեթիվը, անձնական համարը կամ, եթե այդպիսին չկա, այլ հավասարազոր տեղեկություն:

Չի թույլատրվում նրանից որևէ տեղեկություն ստանալու համար կիրառել ֆիզիկական կամ բարոյական ճնշումներ կամ հարկադրանքի այլ միջոցներ: Այն ռազմագերին, որն իր ֆիզիկական և բարոյական վիճակի պատճառով ի վիճակի չէ որևէ տեղեկություն տալ իր անձի մասին, պետք է հանձնվի բժշկական ծառայության խնամքին:

Արգելվում է ռազմագերուց վերցնել իր ինքնության վկայականը: Նա կարող է այն ներկայացնել ցանկացած պահանջի դեպքում:

Սովորաբար, ընդհարման մեջ գտնվող յուրաքանչյուր կողմ պարտավոր է իր զինվորներին կամ իր ենթակայության տակ գտնվող անձնակազմի անդամներին, ովքեր կարող են դառնալ ռազմագերի, ապահովել ինքնության վկայականով:

Ինքնության վկայականը հնարավորության սահմաններում պետք է լինի 6,5x10 սմ չափի և ունենա իր կրկնօրինակը: Այնտեղ պետք է նշվի ռազմագերու ազգանունը, անունը, կոչումը, անձնական համարը կամ համազոր տեղեկություններ և ծննդյան տարեթիվը: Դրանից բացի, ինքնության այդ վկայականը կարող է ունենալ ռազմագերու ստորագրությունը կամ մատնահետքերը, կամ էլ՝ երկուսը միասին, ինչպես նաև պարունակել ցանկացած այլ տեղեկություններ:

Ռազմագերու սեփականությունը

Չի թույլատրվում ռազմագերուց վերցնել՝ առգրավել հետևյալ իրերը

- անձնական օգտագործման բոլոր իրերը և առարկաները,
- մետաղյա սաղավարտը
- հակագազը
- ինչպես նաև այն առարկաները որոնք նրան տրված են անձնական պաշտպանության համար
- նրա մոտ պետք է մնան նաև այն իրերն ու առարկաները, որոնք ծառայում են նրանց համազգեստի և սնման համար, անգամ այն դեպքում, եթե այդ իրերն ու առարկաները պատկանում են պաշտոնական զինվորական հանդերձանքին:

Չի թույլատրվում սուբյեկտիվ՝ անձնական արժեք ունեցող տարբերանշանները և պետական պատկանելության նշանները, պարգևի նշաններն ու առարկաները վերցնել ռազմագերուց:

Ռազմագերու մոտ եղած գումարը կարող է վերցվել միայն սպայի կարգադրությամբ և միայն այն բանից հետո, երբ հատուկ ցուցակում կգրանցվեն այդ գումարների քանակը, դրա տիրոջ մասին տվյալները:

Հետո դրանց կտրվի մանրամասն ստացական, որտեղ ընթեռնելի կգրվեն այդ ստացականը տվող անձի անունը, կոչումը և զորամասը: Ռազմագերու անձնական հաշվին պետք է գրանցվեն նաև գերության մեջ պահող տերության տարադրամով գումարը կամ այն գումարը, որը ռազմագերու խնդրանքով փոխարկվել է այդ տարադրամով:

Ռազմագերուց վերցված դրամական այն գումարը, որը տարբերվում է գերության մեջ պահող տերության տարադրամից և դրանց փոխարկման մասին ռազմագերուց խնդրանք չի ստացվել, պետք է պահվի գերության մեջ պահող տերության կողմից:

Գերության մեջ պահող տերությունը կարող է ռազմագերուց արժեքավոր իրերը վերցնել միայն անվտանգության նկատառումներով: Այդպիսի դեպքերում պահպանվում է նույն կարգը, ինչ-որ դրամական միջոցներն առգրավելիս՝ այսինքն՝ դրանք ևս պետք է գրանցվեն ռազմագերու անվամբ:

Նշված իրերը, ինչպես նաև ռազմագերուց վերցված տարադրամը ռազմագերուն պետք է վերադարձվեն նրա գերության ավարտին այն տեսքով, ինչպես որ դրանք վերցվել են:

Ռազմագերու տարահանումը (տեղավորումը)

Երբ հակառակորդ կողմը գերեվարում է թշնամու զինվորին, նա պարտավոր է հնարավոր կարճ ժամկետում նրան տեղավորել ճամբարում:

Ճանբարը պետք է տեղավորված լինի ռազմական գործողությունների գոտուց բավական հեռու, այնպես, որ այն լինի անվտանգ:

Ռազմագերու տարահանումը պետք է կատարվի մարդասիրաբար և չտարբերվի այն պայմաններից, որոնք գերության մեջ պահող տերությունը տրամադրում է իր զորքերին՝ զորաշարժերի ժամանակ:

Ռազմագերու տեղավորման պայմանները

Ճամբարի պայմանները պետք է լինեն նպաստավոր ապրելու համար: Դրանք չպետք է ավելի վատը լինեն, քան սեփական զորքի պայմաններն են: Այդ պայմանները պետք է ստեղծվեն ռազմագերու սովորույթներին և բարքերին համապատասխան և ոչ մի դեպքում չպետք է վնասակար լինեն նրա առողջության համար:

Ռազմագերու ննջասենյակը պետք է կահավորված լինի համապատասխան անկողնային պարագաներով:

Անհատական կամ կոլեկտիվ օգտագործման նպատակով ռազմագերու համար նախատեսված շենքերը պետք է լիովին պաշտպանված լինեն խոնավությունից: Դրանք պետք է բավարար ջեռուցվեն ու լուսավորվեն հատկապես գիշերամուտի և լույսն անջատելու միջև ընկած ժամանակահատվածում: Ճամբարում պետք է ձեռնարկվեն հակահրդեհային բոլոր միջոցները:

Այն ճամբարում, որտեղ տեղավորված են տղամարդիկ և կանայք, կանանց համար պետք է հատկացվեն առանձին ննջասենյակներ:

Ռազմագերու սնունդը

Ռազմագերուն հակառակորդ կողմը պետք է այնպես կերակրի, որպեսզի նրա առողջությանը վնաս չհասցվի: Սննդի օրական բաժինն իր որակով, քանակով, բազմազանությամբ պետք է բավարարի առողջության պահպանման համար նախատեսված չափանիշներին: Անհրաժեշտ է ռազմագերուն ապահովել բավարար քանակությամբ խմելու ջրով: Բացի դա, գերության մեջ պահվող և աշխատող ռազմագերին պետք է ապահովված լինի լրացուցիչ սնունդով, որը պետք է համապատասխանի նրա կատարած աշխատանքին:

Ռազմագերուն ծխելը պետք է թույլատրվի և նրան հարկավոր է ապահովել ծխախոտով ևս:

Ռազմագերուն պետք է առավելագույնս ներգրավել իր համար նախատեսված սննդի պատրաստման աշխատանքներում: Ուստի ռազմագերին կարող է աշխատել նաև խոհանոցում և իր իսկ ձեռքերով պատրաստել իր կերակուրը:

Արգելվում է ռազմագերուն որպես պատիժ կամ ընդհանրապես զրկել սննդից:

Ռազմագերու հագուստը

Ռազմագերու հագուստը, սպիտակեղենը և կոշիկը պետք է բավարար քանակով հատկացնի գերության մեջ պահող տերությունը: Ընդ որում՝ հագուստ և կոշիկ տրամադրելիս պետք է հաշվի առնվեն այն տեղանքի կլիմայական պայմանները, որտեղ պահվում է ռազմագերին:

Եթե ռազմագերու համազգեստը համապատասխանում է տվյալ կլիմակայական պայմաններին, ապա հակառակորդ կողմն իրավունք չունի դրանք «խլել» ռազմագերուց:

Ռազմագերու հիգիենան

Ամբարը, որտեղ հակառակորդ տերությունը պահում է ռազմագերուն, պետք է համապատասխանի հիգիենայի չափանիշներին: Որպեսզի կանխարգելվեն համաճարակները, գերության մեջ պահող տերությունը պարտավոր է ձեռնարկել հիգիենայի բոլոր միջոցները: Սանհանգույցները, որոնցից օգտվում է ռազմագերին, պետք է մշտապես մաքուր լինի:

Առանձին սանհանգույցներ պետք է ունենա կին ռազմագերին:

Բաղնիքներից և ցնցուղներից բացի, ռազմագերուն պետք է տրամադրվի բավարար քանակությամբ ջուր և օճառ՝ մարմնի մաքրության ամենօրյա պահպանման և սպիտակեղենի լվացման համար: Բաղնիքների ու ցնցուղների համար պետք է առանձնացվեն շինություններ:

Ռազմագերու բժշկական զննումը

Գերության մեջ պահող տերությունը պարտավոր է անվճար ապահովել ռազմագերու բժշկական օգնությունը:

Բուժման ծախսերը, ներառյալ՝ ռազմագերու առողջության ու հիգիենայի պահպանման համար պահանջվող պարագաների ծախսերը, պետք է կատարի գերության մեջ պահող տերությունը:

Ռազմագերին առնվազն մեկ անգամ պետք է անցնի բժշկական զննում:

Բժշկական զննման ժամանակ անհրաժեշտ է ստուգել և նշել ռազմագերու քաշը, հիգիենիկ և առողջական ընդհանուր վիճակը, վարակիչ հիվանդությունների առկայությունը:



Ռազմագերու բժշկական խնամքը

Ճամբարում, որտեղ պահվում է ռազմագերին, պետք է լինի հոսպիտալ (լազարեթ), որտեղ ռազմագերին կստանա բժշկական օգնություն և կնշվի սննդի անհրաժեշտ ռեժիմը:

Անհրաժեշտ է վարակիչ կամ հոգեկան հիվանդությամբ տառապող ռազմագերուն մեկուսացնել՝ հետագա բուժման նպատակով:

Անհրաժեշտ է հատուկ պայմաններ ստեղծել հաշմանդամ ռազմագերու համար:

Չի կարելի խոչընդոտել ռազմագերու մուտքը դեպի բուժանձնակազմ:

Գերության մեջ պահող պետությունը պարտավոր է բուժման ենթակա յուրաքանչյուր ռազմագերու, վերջինիս խնդրանքով, տրամադրել պաշտոնական տեղեկանք՝ նշելով նրա վերքերի կամ հիվանդության բնույթը, բուժման տևողությունը և անհրաժեշտ այլ տեղեկություններ առողջության վերաբերյալ:

Ռազմագերու համար աշխատանքի թույլատրված տեսակները

Ռազմագերին կարող է մասնակցել ճամբարի կառավարման աշխատանքներին: Նրան հարկադրաբար կարելի է ներգրավել հետևյալ աշխատանքներում.

- գյուղատնտեսություն
- արդյունաբերության արդյունահանող և վերամշակող ճյուղեր, բացառությամբ՝ մետաղամշակման, մեքենաշինական և քիմիական արդյունաբերության, ինչպես նաև այն պիսի հանրային աշխատանքներ և շինարարություն, որոնք կրում են ռազմական նպատակներ
- աշխատանք տրանսպորտում կամ բեռնման-բեռնաթափման աշխատանքներ, որոնք ռազմական բնույթ կամ նշանակություն չունեն
- առևտրական գործունեություն, արվեստ և արհեստ
- աշխատանք տնային տնտեսության մեջ
- ռազմական բնույթ կամ նշանակություն չունեցող կոմունալ ծառայություններ:

Ռազմագերու աշխատանքային պայմանները

Հակառակորդ կողմի զինվորին գերեվարած տերությունը՝

Պարտավոր է ռազմագերուն ապահովել համապատասխան աշխատանքային պայմաններով, ինչպես նաև բնակարանով, սնունդով, հագուստով և հանդերձանքով:

Անհրաժեշտ է ձեռնարկել միջոցներ՝ ռազմագերու աշխատանքի անվտանգության տեխնիկայի կանոնները պահպանելու համար:

Արգելվում է կարգապահական միջոցների կիրառման դեպքում ռազմագերու համար սահմանել աշխատանքի առավել ծանր պայմաններ:

Արգելվում է ռազմագերուն ներգրավել նրա առողջությունը վտանգող աշխատանքում, եթե նա համաձայն չէ:

Արգելվում է ռազմագերուն ներգրավել այնպիսի աշխատանքում, որը նվաստացուցիչ է համարվում սեփական զինվորի համար: